ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 26>> 10 2011թ. N: 131 ք.Գյումրի

ԱՎԱՐՏՎԱԾ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 626-Ն որոշմամբ հաստատված <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի>> 5-րդ, 10-րդ և 11-րդ կետերի դրույթները՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի N 15 դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի ամրացման և վերականգնման աշխատանքները ընդունելու նպատակով ձևավորել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Ալբերտ Մարգարյանին՝ սահմանված կարգով և ժամկետում կազմել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և ներկայացնել հաստատման:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Իրավական հեղինակություն է